



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 դեկտեմբերի 2019 թվականի N130-Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ
ՀԻՍՈՒՆ ՏՈԿՈՍ ԵՎ ԱՎԵԼԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱԺՆԵՄԱՍ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ԱՄՍԱԿԱՆ
ՉԱՓԸ, ԼՐԱՎՃԱՐՆԵՐԻ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐԸ, ՎՃԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ
2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 14-Ի N 15-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ
ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 67-րդ հոդվածի 1-ին կետի «իա» ենթակետով՝

ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական չափը՝ համաձայն հավելվածի:

2. Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող լրավճարները և վճարման պայմանները.

1) տվյալ ամսվա վճարովի ծառայություններից ստացված դրամական ընդհանուր մուտքերի 1,5 տոկոսի չափով,

2) կազմակերպությունների տնօրենների աշխատավարձի նկատմամբ հաշվարկվող յուրաքանչյուր ամսվա լրավճարը՝ վճարովի ծառայություններից ստացված մուտքերի մասով սահմանվում է զրո տոկոսի չափով, եթե վճարովի ծառայություններից ստացված ընդհանուր մուտքերի մասով արձանագրվել է տասնհինգ տոկոս և ավել նվազում նախորդ տարվա նույն ամսվա համեմատ՝ գեկուցված հիմնավոր պատճառի բացակայության դեպքում:


3. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2019 թվականի փետրվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի

մարզպետարանի համակարգի 50% և ավելի պետական բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների աշխատանքի վարձատրման չափաբաժիններ սահմանելու մասին» N 15-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2020 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ


25.12.2019

X 

ՀՈՒՆԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

**ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Հ. ՊՈՂՈՍՅԱՆ**

Подписано: ПОГИБСЯН ХУНАС 4095640117



2019թ. դեկտեմբերի 25
ք. Կապան

Սյունիքի մարզպետարանի համակարգի հիսուն տոկոս և ավելի պետական բաժնեմաս
 ունեցող առևտրային կազմակերպությունների տնօրենների վարձատրության ամսական
 չափը

N/N	Կազմակերպության անվանումը	Տնօրենի ամսական աշխատավարձի չափը /ՀՀ դրամ/
1	«Կապանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	912 000
2	«Գորիսի բժշկական կենտրոն» ՓԲԸ	842 000
3	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	565 000
4	«Քաջարանի բժշկական կենտրոն» ՓԲԸ	565 000
5	«Մեղրու տարածաշրջանային բժշկական կենտրոն» ՓԲԸ	450.000
6	«Սյունիքի մարզային նյարդահոգեբուժական դիսպանսեր» ՓԲԸ	297.928
7	«Սյունիքի մարզային արյան փոխներարկման կայան» ՓԲԸ	318.000


12/25/2019

X 

ԷՐԳԱՐ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Signed by MARZETIYAN ERGAR 4003840615

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
 ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ



ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ